

## Մ Ձ Ո Յ Ա Ղ Խ Ա Ր Հ \*)

Մշոյ երկրի ձմեռը բաղմաձին և սաստկասառոյց է ընդհանրապէս. ձմրան ամենէն տաք օրերը ամպամած և ձիւն եկած օրերն են, եթէ բքաբեր և հողմային չըլլան. Խոր աշնան և ձմրան ալ լեռները դաշտէն տաք կըլլան՝ բաց ի հողմային օրերէն, երբ լեռներ սաստիկ ցուրտ և բուր կըլլայ: Դաշտի ցրտութիւն մանաւանդ այն օրեր սաստիկ կըլլայ՝ երբ դաշտի երես թանձր և խտացեալ մուայլով կամ միգուլ մը ծածկուած կգտնուի, որ սուլորաբար նոյ. 15 էն ետքը կըսկսի երկնայ ժամանակ ժամանակ մինչև գարուն. այս ձմեռնային մէքը շատ սնգամ կպատահի. և այս միգամած օրերուն թիւը երբեմն ամբողջ ձիւնխաղաղ ձմրան գրեթէ մէկ երրորդին կհասարի:

Այս մէքը որ այս կողմի երկիրներու մէջ Տարօնոյ միայն սեպհական է, Բիզնունեաց ծովուն, Զխուրայ մեծ շամբի և Տարօնոյ գետոց շոքիացեալ գոլորշին կկարծուի. որ սաստիկ պարզ ու ցուրտ օրեր չկրնալով վեր բարձրանալ ու համատարած օդոյն մէջ ցրուիլ՝ կտարածուի կզոցուի շուրջանակի բարձր լեռներով պարսպեալ Տարօնոյ դաշտի մէջ՝ գետնի երեսին հաւասար, և 1000 — 2000 ոտքի չափ

\*) Տես «Լուսնայ» 1897 Բ. գիրք.

Թանձրութեամբ կիստանայ և անշարժ վիճակի մէջ կմնայ՝ երբեմն 6—7 օր շարունակ, գիշեր գետնի հաւասար ցածնալով և կէս օրէն գկնի դաշտէն երբեմն 2000 ոտրի մօտ բարձրանալով, իր սառնամանկաց սաստկութիւնը կթափէ այն միջոց տեղին վրայ ուր կտիրէ. և կայրէ կչորցնէ թթենեաց և ուրիշ փափուկ և դիւրագգած ծառոց մատղաշ ծիլերը. մինչև որ կամ սաստիկ բամի մը փշերով դաշտի մէջէն հալածէ դինք, և կամ օդին խստութիւնը մեղմանալով գետնի երեսէն քանի մը հազար ոտք բարձրանայ և ամպի կերպարանք առնէ:

Այս թանձր մռայլը, որ եղեամի ծով մ'է, երկրացիք մըժ կանուանեն, որ մշուշ բառին արմատը կթուի և որմէն ելած կերևի Մուշ բառն ալ. իսկ ամրան ջերմութեան պատճառած մշուշն՝ իրենք ալ մշուշ կանուանեն. Քանի որ դաշտը ձիւնով ծածկուած չէ՝ ցուրտ առաւօտները գետեղերքներու մօտ տեղերու և շամբի վրայ միայն կերևի այս մըժը և խիստ նօսր. իսկ ձիւն գալէն ետքը՝ ոչ միայն բովանդակ դաշտին կտիրէ թանձրութեամբ, այլև (Չար-պահուրայ) անցքէն անցնելով՝ մինչև Վարդօ գաւառի կէսն ալ կգրաւէ, որ ներքին Վարդօ կրկոչուի, և կհասնի վերին Պաղլու կոչուած գիւղը. նոյնպէս և դաշտի միւս Անցքերէն ալ իբրևական յառաջանալով կշարժի դէպ ի (Խանտրէզ) Պալունիք Էդէպի Հաշտեանք և դէպ ի Քոնունեաց ծովուն աբլմտեան եղերքը:

Այս մըժը միշտ միևնոյն վիճակի մէջ չգտնուիր, երբեմն սաստիկ թանձրութեամբ մինչև դաշտի ձեան երեսին հետ կպած կըլլայ, և այնպէս խիտ որ 30 կանգուն տեղէն հաղիւ մարդ կտեսնուի. և այս վիճակին մէջ կը գտնուի առաւօտները շատ անգամ, որ առատ եղեամ կըթափէ և սաստիկ ալ ցուրտ կըլլայ. Այսպիսի առաւօտները երբեմն լուսեղէն երևոյթներ կերևին դաշտի երեսէն. մանաւանդ տեսակ մը արևանմանութիւն՝ արևուն

չափաւոր մօտ անոր երկու կողմը հաւասար հեռաւորութեամբ, երկու կողմնական արեւամասնութիւններէն պահած մեծ շրջանակ մը ձգուած կերևի բակի նման երկնից գագաթը, որուն արեւմտեան ծայրերը կցուած չեն ըլլար. նոյնպէս և արեւելեան կողմը: Այս արեւամասնութիւնները արևուն հետ անոր երկու կողմէն հետզհետէ կբարձրանան իրենց ձգած բակովը դէպ ի յերկնից գէնիթը մինչև կէս օրուան ատենները, երբ իրենց լոյսն ու բակը տկարանալով իրենց կենդանի գունոց գեղեցկութիւնը կկորսնցնեն ու կանհետանան, և մռայլն ալ դաշտի երեսէն քանի մը հարիւր ոտք բարձրանալով ցուրտն ալ քիչ մը կտկարանայ: Երկրացիք այս երևոյթին արևու Չորան կըսեն: Իսկ այսպիսի առաւօտներ լեռներու բարձրութիւնէն նայուած ատեն՝ դաշտի երեսէն 1500 ոտքէն աւելի բարձրութեամբ ալեձև սպիտակ դաշտ մը կամ ձիւնէն աւելի սպիտակ ծով մը կերևի՝ բաւական մեծ ու խիտ և հաւասար հեռաւորութեամբ ու անշարժ կոհակներով՝ տեղ տեղ կոհակներու ծայրերը քիչ մը աւելի բարձրացած, որոց վրայ արևուն ջինջ ճառագայթները կթաւալին ու կլողան: Այս մըժի ալիքների ուղղութիւնը ընդհանրապէս դաշտի լայնութեամբը հարաւէն հիւսիս ձգուած կերևի, որով այս մըժը Բզնունեաց բարձրադիր ծովէն հոսանք մը ունենալուն՝ կրնայ աւելի հաւանականութիւն տրուիլ. իսկ քամոյ օրեր քամոյ առջև պարսպաձև կոհակներ դիզուած կերևին, մինչև ուր որ հնչող քամին հասնի ու տիրէ, և մըժի ընական կոհակները տեղ տեղ այսպէս քամիէն շփոթուելով փոփոխութիւն կառնեն և խաւ խաւ իրար վրայ կծալուին: Երբեմն մըժը երկու բաժին կըլլայ՝ կէսը լեռներու գագաթներէն բարձր և կէսը դաշտի վրայ ծալ ծալ նստած: Այս մըժը սուրբ Վարպետի և սուրբ Յովհաննու վանքերու բարձրութեան չհասնիր երբէք. որով այն տեղերը և բոլոր լեռները ոչ

միայն գեղեցիկ տեսարան մը կտեսնեն այն օրերը, այլև ջինջ ու պայծառ արեգակ մը կվայելեն և բաւական բարեխառն ջերմութիւն մը՝ բամի չեղած օրեր. մինչ ընդհակառակն դաշտը խիտ ու թանձր մըժով ծածկուած ու լեռներէն 5—6° աւելի ցուրտ կըլլայ՝ մանաւանդ առաւօտները:

Սաստիկ քամի և ամպշեղած օրեր մըժ չգտնուիր դաշտը. վասնզի քամին կցրուէ. իսկ քամին թուլ եղած և կամ լերանց բարձրերը միայն քիրած ատեն՝ մըժը դաշտի վրայ կտեղմէ և աւելի կթանձրացնէ: Ինչպէս ըսինք այս մըժը փափուկ տունկերուն մեծ վնաս կպատճառէ և զանոնք կչորցնէ. ասոր համար կթուի թէ Տարօնոյ դաւառի լեռնային դիրքեր աւելի յարմար են թթեւեայ և նմաններուն՝ քան թէ դաշտային դիրքեր:

#### ՋԵՐՄԱԶԱՓԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆԸ

Տարօնոյ դաշտի և անոր լերանց օդաբաժնին վրայ ընթերցողաց փորրիկ ճաշակ մը տալու համար հոս կը յայտնեմ երկու տարուան ըրած ջերմաչափական փորձերս սուրբ Կարապետի վանից մէջ: Աստիճանները Ռոմիւրի հաշուով են ամենքն ալ, և ջերմութեան ու ցրտութեան աստիճանները բաւական զգուշութեամբ դիտուած են միշտ առաւօտներ արև ծագելէն առաջ՝ կանոնաւոր պարզ և քամի չեղած օրեր, ջերմաչափը միշտ բաց օդի մէջ մարդաչափ բարձր ձօղէ մը կախելով. նոյնպէս դիտուած են և կէս օրի ջերմութիւնը և այլն. զորս ահաւասիկ ի ներքոյ կ'ամփոփեմ:

#### ԱՌԱՌՕՏԵԱՆ ՋԵՐՄՈՒԹԻՒՆԸ

Մարտ ամսոյ ջերմութիւն ընդհանրապէս 4—9°: Ապրիլ ամսոյն, 8—11°, իսկ փոթորիկ եղած ատեն մինչև զրոյ: Մայիս 1—Յունիս 10ը, 8—15°, իսկ փո-

Թորկի օրեր 4—7<sup>0</sup>: Յունիս 10—30ը, 14—17<sup>0</sup>: Յուլիս 1—Օգոս. 10ը. 17—19<sup>0</sup>: Օգոս. 24—սեպ. 24ը, 11<sup>0</sup>. Երբեմն 1—2<sup>0</sup> ալ բարձր. իսկ փոթորկի օմեր ընդհանրապէս 4: Սեպ. 24—հոկ. 30ը, 11—6<sup>0</sup>: Նոյ. 1—դեկ. 10ը, 6—4<sup>0</sup>, իսկ փոթորկի օրեր զրօ աստիճան:

*ԿԷՍ ՕՐԻ ԶԵՐՄՈՒԹԻՒՆԵՔ ԱՐԵԳԱԿԱՆ*

Մարտ ամսոյ ջերմութիւն բաց արեու մէջ ընդհանրապէս 20—28<sup>0</sup>. իսկ փոթորկի օրեր աւելի ցած: Ապրիլ և Մայիս ամսոց մինչև Յունիս 10ը, 20—30<sup>0</sup>: Յունիս 10—30ը, 28—38<sup>0</sup>: Յուլիս 1—օգոս. 10ը, 38—40<sup>0</sup>: (Այս միջոցին կէս օրուան շուրի և բար ու կիրպատահաններ և դռներ բաց սենեկի մէջ՝ օդի ջերմութիւնը կ'ըլլայ 18—21<sup>0</sup>:) Օգոս. 24—սեպ. 30ը, 30<sup>0</sup>. իսկ փոթորիկ օրեր 25<sup>0</sup>, և քիչ օրեր ալ մինչև 37<sup>0</sup>: Կէս օրուան շուրի և բաց սենեկի օդի ջերմութիւնը, 18—16:) Հոկ. ամսոյ ջերմութիւնը, 30—25<sup>0</sup>: Նոյ. ամսոյնը, 28—23<sup>0</sup>: Դեկ. ամսոյնը, 25—18<sup>0</sup>:

Յունվար և փետրուարի պայծառ և անհողմ կէս օրերու ջերմութիւնը 20—10<sup>0</sup>: Աշնան և գարնան ամիսներուն կէս օրի շուրի մէջ եղած ջերմութիւնը առաւօտեան անարև ջերմութենէն քանի մը աստիճան վեր կ'ըլլայ, նոյնպէս և ամարանը: Կէս գիշերները առաւօտներէն քանի մը աստիճան ջերմութիւն կունենան՝ փոթորիկ չ'եղած օրեր:

*ՅՐՏՈՒԹԻՒՆ ՊԱՐԶ ԵՒ ԱՅՀՈՂՄ ԱՌԱՌՕՏԵՆՐՈՒ*

Դեկ. ամսոյնը ընդհանրապէս, 6—9<sup>0</sup>: Յունվար ամիս՝ 6—11<sup>0</sup>. իսկ ամպոտ օրեր մինչև զրօ: Փետր. ամիս՝ 6—13<sup>0</sup>: Աւելի ցրտերը անհողմ և պարզ օրերն էին, որ մինչև 11<sup>0</sup> կը ցածնար ջերմաչափը, և արև ծագելէն ետքը քիչ քիչ կը բարձրանար: Իսկ հիւսիսի և հիւսիսա-

յին արևմտեան քամոյ օրերը՝ քամի չ'առած տեղերն ալ կէս օրին իսկ մինչև 13<sup>0</sup>ի կ'իջնար, բայց այս սաստիկ ցրտութիւնը երկու տարուան շրջանի մէջ մէկ անգամ միայն պատահեցաւ փետրուար ամսոյ կէսերը՝ երեք օր շարունակ: Այս ձմեռնային ամսոց մէջ ամպամած առաւօտներ 1—5<sup>0</sup> ջերմութիւնը կ'ըլլար: 4<sup>0</sup>էն վար եղած առէն՝ ձիւն կ'ուզար: Սեպ. 5էն սկսեալ փոթորկի օրեր մինչև օգետ վերստին շիտկուէին՝ գիշերներ բաց օդի մէջ ջերմաչափ զրօյի կ'իջնար:

Ահա ասոնք են երկու տարուան փորձոցս գլխաւոր բովանդակութիւնը:

#### Հ Ո Ղ Մ Ո Ւ Ն Ք

Տարօնոյ երկիր բարձրաբերձ լեռներով պարսպուած ընդարձակ դաշտ ըլլալով՝ չորս կողմէն ամեն քամիք ալ կը հնչեն իր մէջ փոփոխակի:

Տարօնոյ դաշտը փշող ամառնային և թէ՛ ձմեռնային քամիք ամենն ալ առողջարար են. միայն ամառը շամբի վրայէն անցնող քամիք զգուշալի կ'երկին. բայց դժբաղ՝ տաքար զգացող և զգուշացող չ'կայ. և ասոր համար ամառը դաշտի մէջ նուազ, իսկ դաշտի արևելեան մասին մէջ ջերման հիւանդութիւն գրեթէ ամեն տան մէջ կը գտնուի. բայց վնասող շատ չէ: Ձմրան քամիներու վնասն ալ արդէն իրենց սաստիկ՝ և երբեմն խոնաւ ցրտութիւնէն առաջ կ'ուզայ. որ անդգոյշ ժողովրդեան այլ և այլ տարափոխիկ հիւանդութեանց և երբեմն բազում մահուան պատճառ կըլլան:

Դաշտի և լեռանց զանազան մասերուն այլ և այլ մասնաւոր քամիներ կը տիրեն. մասնաւանդ ձմեռն ու գարունը: Դաշտի մէջ լեռներէն պակաս կ'ըլլայ քամին՝ մանաւանդ ձմեռը. վասն զի լեռանց ամենէն սաստիկ քամիները որ են հիւսիս և հիւսիսային արևմուտք, դաշտի

ամեն մասերուն միապէս չ'են տիրեր, և շատերը դաշտի կեդրոնն իսկ չ'են հասնիր: Աչնան և ձմրան փշող քամիք են ընդհանրապէս հիւսիս և հիւսիսային արևմուտք, գարնանը՝ արևմուտք հարաւ և հիւսիսային արևմուտք, իսկ ամառանը՝ գլխաւորապէս հարաւ և արևելք, միւս քամիք քիչ անգամ կը փչեն:

Հիւսիսային քամին Չար—պուհուրի ուղղութեամբ դաշտը կը մտնի և 5—6 ժամ լայնութեամբ տեղ գրաւելով դաշտի երկարութենէն Մուշ քաղքին կը տիրէ սաստիկ սառնամանեօք, և երբեմն մինչև եօթն օր շարունակ կը փչէ. Տարօնոյ ձմեռը սաստկացընողն՝ այս խապիկ կոչուած քամին է. թէև դաշտը միգամած եղած ատեն մէգը (մըժ) կը փարատէ կանհետացնէ. սակայն մէգէն աւելի վնաս կուտայ մատաղատունկ և դիւրագգած և փափուկ ծառոց ճիւղերուն և կ'այրէ կը չորցընէ գանոնք: Չմեռնային սաստիկ քամոյ օրերը շատ տարիներ թողոր ձմրան մէկ երրորդին կը մօտենան՝ լեռնային դիրքերու մէջ:

Տարօնոյ ամառնային քամիները հետևեալ կերպով կը փչեն փոփոխակի: Արևելք՝ մինչև կէս օր և երբեմն մինչև երեկոյ, և հիւսիս երեկոյին կը փչէ. իսկ հարաւ որ շատ երկիրներու համար խորշակաբեր և վնասակար է, այստեղ Տօրոսի շղթայից բարձրաբերձ և ձիւնապատ գագաթներէն փչելով կէս օրուան սաստիկ շորը, մինչ բոլոր դաշտը ջերմութեան թանձր մշուշով մը պատած կ'ըլլայ, սքանչելի կերպով կը բաղցրացընէ. և Տարօնոյ դաշտի չոր օղը բարեխառնել մեղմելով բուսոց և արմտեաց սնունդ և բեղմնաւորութիւն կը մատակարարէ: Մէկ խօսքով արևելք և հիւսիս քամիները կը զովացընեն ըզճարօն, բայց հարաւային հողմը ամառը Տարօնոյ Երասխն ու Նեղոսն է. քանի որ արևելեան քամին Ապահունեաց և Հարթայ չոր ու ջերմ դաշտերու վրայէն փչե-

լով Տարօնոյ բեղմնաւորութեան կը մնասէ, թէև յիշեալ դաշտաց բարեբեր կը հանդիսանայ:

Արևելք և հարաւային քամիք բովանդակ դաշտին և լեռանց միասպէս կը տիրեն, և ինչպէս արդէն ըսած ենք՝ աւողջարար են:

#### ԱՂԲԻՒՐ, ՉՈՐ ԵՒ ԳԵՏ

Հոս կ'ուզեմ բնական կարգէ զարտուզելով Տարօնոյ ջրային մասը առաջ նկարագրել և ապա ցամաքայինը, նոյնպէս և լեռնայինը դաշտայինէն առաջ դասել: Տարօնոյ դաշտի ամեն գիւղերը բաղմամբիւ աղբիւրներ ունին. նոյնպէս և դաշտի ամեն կողմերը, որոնց շատերը պաղ ու քաղցրահամ են. խիստ քիչ գիւղեր կը գտնուին որ առուի կամ գետի ջուր խմեն. ունին կենդանեաց մեծամեծ գոմերու մէջ քաղցր ջրոյ ծանծաղ ջրհորներ ալ. սակայն մարդոց համար չ'են գործածել՝ անմաքուր պահուած ըլլալուն համար. թէև շատ երաշտ տարիներ աղբիւրներէն ոմանք կը ցամքին նոյնպէս և առուններն ալ և գիւղերէն ոմանց մէջ աղբիւր չ'մնալով կսկսեն չափաւոր նեղութիւն զգալ ջրի: Ջրի համար գետնի տակ զանգան (ական) բանալն ալ ծանօթ է այս երկրին:

Դաշտին այլ և այլ կողմերը հանրային՝ մանաւանդ բնական արջասպի (դաճ) և երկաթի պաղ ջրեր ալ կը գտնուին, որոց ջերմուկ անունը կ'ուտան երկրացիք՝ թէև անոնք ջերմութիւն չ'ունին, և ախտաթէտնեղը այն ջրերով լողացնելու սովորութիւն ունին՝ մայիս ամսոյ մէջ բայց չեն համարձակիր խմելու՝ վնասակար համարելով և կասկածելով:

Դաշտի մէջ ուրիշ գաղջ ջերմուկներ ալ կարելի է որ գտնուին. բայց աղնիւ մեծ ու առատաջուր ջերմակյմը կայ Մուշեղչինու շամբի եզերքը, չորս կողմը սալատակ շինուած, որուն ինչ հանքերէ բաղադրուած ըլ-

լալը և ինչ զօրութիւն ու յատկութիւն ունենալը ճարտար բժշկաց քննութեանը կկարօտի. սակայն երկրին ժողովուրդը գրեթէ ամեն տեսակ արտերէ բժշկուելու համար անխտիր կյաճախէ:

Յփրատ և Մեղրեայ գետերը օժանդակելու համար Տարօնոյ դաշտի մէջ բաւական գետակներ կիջնան իր շուրջը սլարսալող լեւներէն, որոնց շատերը իրանց բլրխած տեղերէն խոխոշանքով և օձապտոյտ սուր ընթացքով երեք ժամէն աւելի ձորային ոլորուն ճամբայ կընեն դաշտը հասնելու: Ասոնք գարնան խիստ առատաջուր են, և ապրիլ ու մայիս ամսոց մէջ մեծամեծ ձկներու երամներ կգտնուին իրենց մէջ, որ մեծ գետերէն կքաշուին ժողովրդեան որս ըլլալու համար, իսկ ամրան ժամանակ ամենն ալ շորային և դաշտային գիւղորէից արտերը ջրելու գործածուելով՝ իրենց օժանդակելու գետերը չեն հասնիր, և խսպառ կցամբին իրենց աւազանները, որոց գարնանային խօշիւնը ականջներ կխլացնէր:

Տարօնոյ դաշտէն երկու մեծ գետեր կանցնին, Մեղրեայ կամ Մեղրտեայ գետ (Մեղրագետ) և արևելեան կամ հարաւային Յփրատ և կամ Արածանի (Մուրատ), որոնք՝ մանաւանդ Յփրատը գարնան ամիսները խիստ ահեղ կերպարանք մը կառնու և սաստիկ յորդութեամբ ու լայնածաւալ յորձանքներով իր աւազանը կընդարձակէ և եղերրները կտարածէ, և մինչև յունիսի կէսերը միայն տկալատով (քէլէք) անցուղարձ կըլլուի վրայէն. Մեղրագետի վրայ ալ նոյն օրերը փայտէ լաստ կըանի:

Դաշտի արևելեան ծայրին խիստ մօտ, նոյնպէս և Գրդուռայ ու Ներբովթեան լեռան ստորոտին՝ մեծ ակէ մը կըղխի Մեղրագետը, որուն կօժանդակեն անմիջապէս նաև նոյն տեղի շատ մը մեծ ու փոքր աղբիւրները և Ներբովթեան լեռան ու մեծ շամբի ջրերն ալ, և յարևելից յարևմուտս մանուածաւալ շարժամբ և օձասարաս

հանդարտ սողսօկելով մը դաշտի երկարութիւնը երկուքի կճեղքէ՝ հիւսիսային մասը աւելի լայն թողլով. և աջէն ու ձախէն շատ մը գետակներ իր մէջ ընդունելով և 12 ժամի չափ տեղ ճանապարհ ընելով՝ Կոմս գիւղի մօտերը Եփրատին կիսառնուի: Այս գետը Քօսուրի մէջ կըզխի և Քօսուրի ծայրը կաւարտէ իր ընթացքը:

Իսկ Եփրատ գետ հարբէն գէպ յարեմուտս բաւական սրարշաւ խաղալով (Չար-Պուհուր) լիցշուած տեղը կը հասնի. և անկէ ուղղակի հարաւ խոտորելով Տարօնոյ դաշտը կ'մտնէ՝ յորձանուտ խրոխտ արշաւանօք. և հինգ ժամու չափ այն ուղղութեամբ երթալէն զինի՝ վերստին կիսոտորի արեւմտեան հարաւ. և Սուլուխ գիւղի փայտածածր մեծ կամրջի տակէն փոքրիկ յորձանքներով սուրալ անցնելով կ'հասնի դաշտի վերջին ծայրը. և անկէ 10 գրկաչափ մօտ նեղ ու բազմաստիճան սահանքներով ահապին շառաչմամբ կ'հոսի և որոտմամբ կ'իջնէ հաշտեանք: Եփրատ գետ դաշտի արեւմտեան մասերէն 10 ժամու չափ ճամբայ կ'ընէ՝ միշտ խանտրէզ վիճակի մէջէն. և իր ընթացքը Մեղրագետի ընթացքէն արագ է շատտեղ. ջուրն ալ անկէ ազնիւ. սակայն երկուքն ալ ոչ ազօրիք կըարձնեն և ոչ արտ մը կ'ջրեն, երկրին մէջ արհեստ չըլլալուն պատճառաւ:

Առատ և համեղաճաշակ ու մեծամեծ ձկներ կան այս գետոց մէջերը, որ կրնան մինչև իսկ մարդ կըլլել, ինչպէս երբեմն երբեմն պատահած է. նոյնպէս և անթիւ երամներ տեսակ տեսակ փօքր և մեծ ջրասէր թռչնոց, որոնք մանաւանդ յունիսի կէսէն ետքը բանակ կազմելով կարծես թէ գետեղերընուն և գետի ջրերուն կտիրեն. և երբեմն ձիւն չեկած կամ ոչ եկած տարիներ մինչև զեկ. վերջերը բաւական բազմութեամբ դեռ կը գտնուին՝ բանակի մը մնացորդաց նման: Այս թռչնոց և ձկանց տեսակները վերը յիշած ենք արդէն:

## ՄՕՐՈՒՑ ԿԱՄ ՇԱՄԲ

Տարօնոյ դաշտը մասնաւոր մեծ մօրուտ մը ունի իր արևելեան ծայրը Մուշեղչինու և Օձ բաղբի մէջտեղը, որուն շրջապատը եօթը ժամէն աւելի է, և լի է բազմատեսակ ճախնային և ջրասէր թռչնոց մեծամեծ երամանորով. ձմեռը սառած ատենն ալ շատ անգամ կինճերու երամակներ կլցուն մէջը, ինչպէս ամառն ալ արջեր:

Այս մօրուտը որ երկրացիներէն շամբ կկոչուի, գարնան մեծ լճի մը կերպարանք կառնէ. իսկ ամառան ցամաքելով՝ անբաւ խոտ կբաղեն շուրջի գեղացիք, որոց վրայ բաժնուած է բովանդակ Չամբը. և աշնան ալ խանձ ձգելով շրայուած չոր խոտերը կայրեն, որ գարնան վերստին լաւ խոտ բուսնի. Չամբի բուսուցած խոտը կակուղ և երկար բալախ է. կբուսցնէ նաև անբաւ եղէգ, պրտու և կնիւն. եղէգը վառելու և նոր շինուելիք տներու ծածրին հողկալ ընելու կգործածեն. իսկ պրտուններն ու կնիւնը խսիր գործելու:

Եթէ հող տարուի՝ այս Չամբիս գէթ մեծագոյն մասը կընայ ցամաքիլ ջրանցքներ բացուելով, և նոյն տեղերը աննման բազմաբեր արտեր ըլլալ. որով այն կողմերու գիւղերու օգն ալ մաքրուիլ և աւելի ազնուանալ:

Դաշտի մէջ քանի մը տեղեր ալ խիստ փոքրիկ ճախճախուաներ կգտնուին՝ մէկ կամ երկու ժամ շրջապատով. ինչպէս Մշոյ մօտերը Նորչէն գիւղի և Ծծմակայ մէջտեղը. և Ղաշղալտաղ և Գեօլ գիւղերու դաշտերն ալ, որոնք ամենն ալ ամառան կցամբին և իրենց եղէգն, պրտուն ու բալախը կբաղուն:

Այս երկիր Խաճին անունով շատ տեղեր կան՝ որ ձախին ըսել են. բայց ասոնք խիստ փոքր շրջապատ կունենան և մշտադալար արօտավայրեր են և ամառան կը ցամաքին ընդհանրապէս. Բնական մարգերուն ալ (ճեմ կամ ճրմ, չիմ, չիմէն) անունը կուտան որ գետեզերք-

ները կգտնուին և տեսակ մը խաճին են, բայց ընդարձակ և մեծատարած կըլլան ընդհանրապէս:

#### ՏԱՐՕՆՈՅ ԼԵՌՆԵՐ

Տարօնը շրջապատող լեռները ամենն ալ գօտեւոր բարձր և սքանչելի ամարանոցներ են՝ զարդարեալ գոյն-ըզգոյն ծաղիկներով և ակնավճիտ հազարաւոր աղբիւրներով. սառնորակ փոքրիկ լճերով և կարկաչասահ առուակներով:

Տարօնոյ դաշտի արեւելեան լեռը ինչպէս ըսինք, ցարդ Ներքովթ անունը կիրէ. և իր հարաւային վերջին ծայրը Գրգուռ կիոչուի՝ որ զրեթէ՛ Տարօնոյ, Մալնոյ ձորոյ, Ալնուաց ձորոյ և Բղնունեաց սահմանները կմխցնէ: Գրգուռայ անուանակոչութիւնը Մամիկոնեան պատմիչը կերպով մը պարսից Վախթանկ զօրապետին կուտայ, իբր թէ իր որդւոյն Գրգուռսին անունովը այն լեռան վրայ շինած աւանին պատճառաւ այնպէս կոչուած ըլլայ. սակայն ասիկայ հայկական աւանդութեան մը հակառակ հերեւի. եթէ այն գիմառնական աւանդութիւնը ետքէն հայ վիպասաններէն կերպարանուած չէ՛, Ասիէ զատ գոռոզ կանուանէ այս լեռը՝ որ Ներքովթի անունով կիոչուի ցայսօր. և Գոռոզ ՚կամ Մասիս Ներքովթի արեւելեան մասը (Սիփան) լեռը կհամարուի. թէեւ գոռոզ բառով կարելի է Ներքովթն ալ իմանալ. Կաւանդեն թէ Նոյեան տապանը Գրգուռի վրայէն անցնելու ատեն ջրերը ցած ըլլալուն՝ շօշափմամբ անցեր և կրկուալու ձայն հաներ է, նահապետը այն ատեն լեռան ըսած կըլլայ. «Գրգուռ առ զիս» և պատասխան կընդունի թէ. «գնա ի Մասիս որ բարձր է քան զիս». երկրացիք այսպէս կաւանդեն Գրգուռի անուանակոչութեան պատճառը:

Գրգուռ ատենօք Ներքովթեան չհրաքիսի մեծ խառնարանն եղած և շատ տարիներ կենդանի մնացած կե-

րևի. ինչպէս կյայտնեն իր կոթողաձև բարձրութիւնը, սարահարթ բլուրջի մեծ գլուխը, կլոր սեղանի ձևով. և նաև իր խորշխորշանի կողերը:

Ներքովթեան լեռը՝ որուն սարահարթի վրայ ըստ աւանդութեան հաւանականութեան Ներքովթի մարմինը թաղուած ըլլալուն համար այսպէս կոչուած է, բարձր և երկայնաձիգ լեռ մէջ Բզնունեաց և Տարօնոյ մէջ, իր բարձրութեան համեմատ աւելի դժուարուտ և ամուր չէ. անտառն ու ջուրն ալ նուազ է, և Տարօնոյ երեսի վրայ շէներ և գիւղեր ալ պակաս են. Բաղիշոյ վառելիք փայտը այս կողմերէն կերթայ: Այս լեռան վրայ ալ բաւական աւանդութիւններ կ'սօսուին:

Տարօնոյ դաշտի հիւսիսը ծայրէ՛ի ծայր կը պարսպէ Ներքովթեան լեռան արևմտեան բազուկը որ մինչև (Չար-Պուհուր) հասնելով դաշտին հետ ինքն ալ կը սպառի: Ասիկա խոնարհ՝ սակայն բազմաձոր բազմախորշ և բազմաբնակ լեռ մէջ հարրայ և Տարօնոյ մէջ ձգուած. և կը կոչուի (Քոսուր և խանտրէզ) վիճակաց անունով:

Այս լեռան Տարօնոյ երեսն էին Օձ բերդ, նոր քաղաք. Ձիւնկերտ կամ Պորպէս և Տաղօն քաղաքները, որոց աւերակները դեռ յայտնի են՝ բաց ՚ի Ձիւնկերտէն որուն դիրքն իսկ դեռ անյայտութեան մէջ է: Օձ քաղաքի մեծադիր և ամուր բերդը Չամբի եզերքը և լեռան կից քաջապէս կ'երևի դեռ ևս իր բլրաձև բարձր դիրքի վրայ, ուր մեծամեծ աղբիւրներ կը գտնուին և որուն մօտէն կ'անցնի Ներքովթէն իջնող վտակ մը որ Չամբէն անցնելով Մեղրագետ կը խառնուի:

Տարօնոյ արևմուտքը կը պատէ Քարկէոյ կամ Արձան բազմաբնակ լեռը, որ Սրմանց լեռանց արևելեան և հարաւային վերջին բազուկն է, և անհաղորդ է Ներքովթի արևմտեան բազուկին. նոյնպէս և Սիմ լեռան, որոց երկուրէն ալ Եփրատի հիւսիսային և հարաւային անցքերով

դատուած է: Ունի ընդարձակ սարահարթներ՝ բաղմաթիւ ծաղկաւէտ ու գուարճալի հովիտներու բաժնուած, որոց մէջէն հազարաւոր աղբիւրներ Քլբղխին ու խոխոջալով կրննթանան:

Այս լեռը առաջ անծանօթ Քարկէոյ քաղաքի կամ աւանի մը անունով կոչուած էր. թերևս և Վիշապ կամ Աշտիշատ ու Մծուրկ քաղաքաց և Ծիծառն մեծ աւանի անուններով ալ կոչուած ըլլան իր մասերը. վասն զի ասոնք ամենն ալ իր լեռնոտները կգտնուէին և հոչակաւոր վայրեր էին. իսկ հիմա սուրբ Գարապետի հռչակաւոր վանից անունով սուրբ Գարապետի լեռ կկոչուի, վասնզի այս լեռան ղլխուն մօտիկ կառուցուած է այս վանրը բաւական տափարակաձև տեղի մը վրայ և արևելահայեաց դիրքով բոլոր դաշտը կդիտէ: Մանրավանքն ալ որ Աշտիշատէն ժամաւ մը հեռի դէպ ի դաշտն է, Քարկէոյ լեռնէն հեռի չէ: Քարկէոյ լեռան արևելեան մասը ձգուած է Տարօնոյ և Վարդօյի մէջտեղը, իսկ հարաւայինը Տարօնոյ և Հաշտենից Պալունեաց վիճակին մէջտեղը:

(Կը շարունակուի)

